



# ԲԱՆԱԽՈՍ

ԹԻՎ 15


Հ Ի Ն Գ Շ Ա Բ Թ Ի , Մ Ա Ր Տ Ի 12 , 1998 թ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ` ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

### ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար

Անկախ պետականության գաղափարախոսության որդեգրումով Հայաստանում հիմք դրվեց տնտեսական բարեփոխումների շարունակական գործընթացի առաջին փուլին: Դեռևս ռուբլու գոտում գտնվելու ժամանակ, իսկ խոսքը գնում է 1989 թվականը հաջորդող տարիներին, արդեն իսկ ակնհայտ էր, որ Հայաստանը զերծ մնալ չի կարող բոլոր այն խնդիրներից, որոնք հատկանշական են անցումային տնտեսություններին: Ակնհայտ էր, որ վաղ թե ուշ պետք է կարողանանք կերտել մեր տնտեսությունը, ներմուծել մեր ազգային դրամը, ունենալ սեփական տնտեսական համաչափություններ: Խորհրդային Միության փլուզումից և անկախ պետականության ձևավորումից հետո գրեթե բոլոր պետություններում` թե՛ նախկին խորհրդային, թե՛ արևելաեվրոպական երկրներում, ստեղծվել էր մի իրավիճակ, երբ գրեթե բոլոր տնտեսական հիմնախնդիրները նույնն էին, ստացած ժառանգությունը` համատիպ: Ժառանգության տեսանկյունից առկա էր միայն զգալի տարբերություն նորանկախ Հայաստանի պարագայում, ինչը մեզ առավել ոչ բարենպաստ հարթության վրա դրեց վերոհիշյալ երկրների շարքում:



Արմեն Դարբինյանը ծնվել է 1965 թ. Գյումրիում: Դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո 1981թ. ընդունվել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, որն էլ գերազանցությամբ ավարտել է 1986թ.: Նույն թվականին ընդունվել է Լոմոնոսովի համալսարանի ասպիրանտուրան և անցել է դասախոսական աշխատանքի:

1989թ., պաշտպանելով գիտական թեզը` ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նույն թվականին անցել է աշխատանքի Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցչությունում: Միաժամանակ հանդիսացել է նախկին ԽՍՀՄ արտաքին պետական, ինչպես նաև նախկին «ՎՆԵՆՆԷԿՈՆՈՒՄ-բանկի» գծով ձևավորված պարտքերի կարգավորման միջպետական հանձնաժողովում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչը:

1992 թվականից Փարիզյան և Լոնդոնյան ակումբների վարկատուների հետ բանակցություններում հանդես է եկել որպես ՀՀ լիազոր ներկայացուցիչ:

1992թ. վերադարձել է Երևան, ուր նշանակվել է Հայաստանում առաջին «Արմենինտորգ» արտաքին առևտրի միավորման գլխավոր տնօրեն:

1994թ. հունվարին, կենտրոնական բանկի ձևավորման շրջանում, 29-ամյա Արմեն Դարբինյանը Գերագույն խորհրդի կողմից ընտրվում է Հայաստանի բանկի փոխնախագահ:

1997թ. հունիսին Արմեն Դարբինյանը ստանձնում է Հայաստանի ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի պաշտոնը: "Նովոյե պակալենիյե" շաբաթաթերթի կողմից Սորոսի միջազգային հիմնադրամի աջակցությամբ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում անցկացված հարցման արդյունքներով Արմեն Դարբինյանը ճանաչվել է 1997թ. «Տարվա երիտասարդ մարդը»:

Ամուսնացած է: Դուստրը 4 տարեկան է:

(շարունակությունը` էջ 2)

Պետք է հիշեցնեն, որ 1988թ. կործանարար երկրաշարժը բավական լուրջ բացասական ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա: Ռազմական զործողությունները և Լեռնային Ղարաբաղի հակամարտության առկայությունը նույնպես չէր կարող ազդեցություն չթողնել Հայաստանի տնտեսական գերակայությունների վրա: Սրան հետևեց շրջափակումը, որը նույնպես արտաքին առևտրի զարգացման տեսանկյունից լրջագույն գործոն հանդիսանալով, տարբերեց ՀՀ զարգացումը այլ երկրների զարգացումից: Մյուս գործոնը էներգետիկ ճգնաժամն էր, որին մենք ականատես եղանք և որի պայմաններում ապրեցինք բարդագույն տարիներ՝ կապված նախ ռեսուրսների անբավարար վիճակի, ապա՝ համակարգի ոչ ձևավորված լինելու հետ:

Այս բոլորն, իհարկե, բավական տխուր իրավիճակ ստեղծեցին հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով: Բավական է նշել, որ 1989 թվականը հաջորդող մի քանի տարիների ընթացքում երկրում արտադրված համախառն ներքին արդյունքն իրական արտահայտությամբ կրճատվեց ավելի քան 40%-ով, ունեցանք արտաքին ապրանքաշրջանառության ծավալների անմախաղեպ անկում: Սրանք իրոք լրջագույն ահազանգ էին, և տնտեսության կայունացման անհրաժեշտությունն արդեն պարտադիր էր:

Սա էր թերևս պատճառը, որ 1993թ. Հայաստանը որդեգրեց տնտեսության կայունացման քաղաքականությունը, որի սկիզբը ես ուղղակիորեն կկապեի սեփական դրամի ներդրման հետ: Վերջինս տեղի ունեցավ 1993թ. նոյեմբերին:

Կառուցվածքային բարեփոխումների իրականացումը նախ և առաջ ենթադրում էր շուկայական ենթակառուցների ստեղծում, համապատասխան միջավայրի ապահովում: Այս տեսանկյունից առանձնացան հատկապես սեփականաշնորհման, ֆինանսական հատվածի բարեփոխումների, տնտեսության ազատականացման և համապատասխան իրավական դաշտի ձևավորման գործընթացները:

Մինչ 1997թ. կեսերը սեփականաշնորհման գործընթացի նպատակը մեկն էր. տնտեսությունում պետք է կատարվեին կառուցվածքային փոփոխություններ և շուկայական տնտեսություն

կառուցելու համար անհրաժեշտ էր ապահովել համապատասխան նախադրյալներ: Սա էր թերևս պատճառը, որ Հայաստանը գնաց էքստենսիվ ճանապարհով՝ փորձելով հիմնականում «կոտրել» պետական սեփականությունը և ստեղծել մասնավոր սեփականատերի խավ տնտեսության մեջ: Երկրորդ պլան մղվեց այդ գործընթացի որակական կողմը:

Ֆինանսական հատվածի բարեփոխումները ներառում էին առաջին հերթին բանկային համակարգի ստեղծումը, և պետք է նշեն, որ այն բավական լուրջ օրենսդրական հիմքերի վրա դրվեց. 1993թ. ընդունվեցին «Կենտրոնական բանկի մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքները: Համաձայն այդ օրենքների ձևավորվեց երկաստիճան բանկային համակարգ, ամրագրվեցին ՀՀ Կենտրոնական բանկի հիմնական ֆունկցիաները՝ որպես դրամավարկային քաղաքականություն և բանկային վերահսկողություն իրականացնող ինստիտուտ:

Տնտեսության ազատականացման վերաբերյալ թերևս հիմնական մոտեցումն այն էր, որ պետք է ստեղծվեր լիբերալ տնտեսության օրենսդրություն, որի ստեղծմանը հետամուտ եղան կառավարությունը, օրենսդիր իշխանությունը, և կարծում եմ, այստեղ եղան լուրջ նվաճումներ: Համադրելով այսօր գոյություն ունեցող տնտեսական և ֆինանսական օրենսդրությունն այլ պետությունների հետ, միանշանակ կարող ենք պնդել, որ Հայաստանում ամրագրված են տնտեսական լիբերալիզմի բոլոր մոտեցումները:

Տնտեսության ազատականացման հիմնական մոտեցումները դրանք շուկաների, գների, վճարային հաշվեկշռի ընթացիկ և կապիտալ հաշիվներով իրականացվող գործառնությունների ազատականացումը, ինչպես նաև փոխարժեքի լողացող տարբերակի ընդունումն էր: Սա մի քաղաքականություն էր, որը, կարծում եմ, Հայաստանի պայմաններում այլընտրանք չուներ: Մենք պետք է կարողանանք ստեղծել տնտեսություն, որը կգրավեր արտասահմանյան ներդրողին:

Տնտեսության կայունացման գործընթացի թերևս առաջին կանխորոշիչն այդ ժամանակահատվածի համար կոշտ դրամավարկային քաղաքականության իրականացումն էր: Այդ

**Մենք պետք է կարողանանք ստեղծել տնտեսություն, որը կգրավեր արտասահմանյան ներդրողին:**

գործընթացին հատկանշական էին նաև արտաքին պետական պարտքի բեռի կտրուկ աճը, պետբյուջեի սպառողական բնույթը, ինչպես նաև պետության նվազագույն միջամտությունը շուկաներին:

Պետք է նշեն, որ ունենալով հիպերինֆլյացիայի աննախադեպ ցուցանիշներ 1993 - 94 թվականներին՝ համապատասխանաբար 10800% և 1700%, հետագա տարիներին հաջողվեց կայունացնել իրավիճակը և արդեն 1995 թվականին ունեցանք 32,2%, իսկ 1996-ին՝ ընդհանրապես գրանցվեց նախկին ԽՍՀՄ երկրների մեջ նվազագույն ինֆլյացիան՝ 5,7%: Այդ ցուցանիշը 1997 թվականին կազմեց 21,9%: Քաղաքականությունը, որի արդյունքներն ամրագրված են նշված թվերով, մեզ թույլ չտվեց օգտագործել 1996թ. ձեռքբերումները, որով հետև առաջին հերթին ժառանգել էինք բավական լուրջ ինֆլյացիոն պոտենցյալ, և երկրորդ՝ տնտեսական աճի, պետական ներդրումային քաղաքականության լուրջ գերակայություններ դեռ ամրագրված չէին: Խոսքս վերաբերվում է և՛ 1996թ., և՛ 1997թ. առաջին կիսամյակին: Ինֆլյացիոն հիմնական ժամանակահատվածում մենք ունեցանք նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի կտրուկ աճ:

Տնտեսության կայունացման քաղաքականության տարիներին առկա էր մեկ այլ լուրջ գործոն, որն ազդեց կառավարության ընդհանուր տնտեսական և ֆինանսական քաղաքականության վրա. դա արտաքին պետական պարտքի բեռի կտրուկ աճն էր: 1992 թվականի մոտ 0,7 միլիոն ԱՄՆ դոլարից պետական պարտքի ցուցանիշն այսօր հասնում է մոտ 650 մլն. ԱՄՆ դոլարի: Ընդ որում, հիմնականում արտաքին պետական պարտքի կտրուկ աճը տեղի է ունեցել 93-95թթ. ընթացքում, որը պայմանավորված էր նաև այնպիսի օբյեկտիվ հանգամանքներով, ինչպիսին էին շրջափակումը, երկրաշարժի հետևանքների վերացման անհրաժեշտությունը և էներգետիկ ճգնաժամը: Վերջինիս դերը բնութագրելու համար նշեն միայն, որ արտաքին պետական պարտավորությունների ընդհանուր գումարից 167,5 մլն դոլարը բաժին է ընկնում էներգետիկ համակարգի համար ձեռք բերված ռեսուրսներին: Մոտ 96 մլն դոլար՝ օգտագործվել է ատոմակայանի վերականգնման, գործարկման և անվտանգության միջոցառումների իրակա-

նացման համար, 71 մլն դոլար՝ էներգետիկ համակարգի բարեփոխումների նպատակով:

Սի քանի նկատառում՝ համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի մասին: ՀՆԱ-ի դինամիկան վկայում է, որ կայունացման քաղաքականությունը հետևյալ ձևով անդրադարձավ ՀՆԱ ճյուղային կառուցվածքի վրա: Արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության տեսակարար կշիռները ՀՆԱ-ի մեջ շարունակաբար նվազեցին, փոխարենը առևտրի և ծառայությունների որոտի տեսակարար կշիռն ավելացավ: Սա նույնպես ունի իր բացատրությունը. դրամական զանգվածի աճի տեմպի սեղմման և կայունացման քաղաքականության իրականացման պայմաններում տնտեսության ավանդական ճյուղերը տառապում էին դրամական միջոցների պակասությունից, բացակայում էին արդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ երկարատև ներդրումները:

**1996թ.-ին գրանցվեց նախկին ԽՍՀՄ երկրների մեջ նվազագույն ինֆլյացիան՝ 5,7%:**

Այս ամենը բերեց նրան, և մեր հիմնական եզրակացությունը կայանում էր նրանում, որ տնտեսության կայունացումը բավարար չէր ինվեստիցիոն աշխուժացման համար: Իրական ՀՆԱի դինամիկան վկայում է, որ 1996-97 թվականների ընթացքում դիտարկվել է այդ ցուցանիշի աճի տեմպի նվազման միտում, և այն, իհարկե, կշարունակվեր ու կշարունակվի, եթե մենք չկարողանանք կտրուկ միջոցներ ձեռնարկել տնտեսությունում ներդրումային աշխուժացումը ավելացնելու համար:

Ոչ վաղ անցյալում ՀՀ կառավարության կողմից որդեգրած նոր տնտեսական քաղաքականության կարևորությունն ու արդիականությունն են ապացուցում մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վերոհիշյալ միտումները: Նոր գաղափարախոսությունը դրվեց որպես 1998թ. պետական բյուջեի սկզբունքային հիմք և ենթադրում է անցում տնտեսության կայունացման քաղաքականությունից կտրուկ տնտեսական աճի ռազմավարության:

Որոնք էին 1998թ. պետական բյուջեի սկզբունքային առանձնահատկությունները: Բյուջեն առաջին անգամ ներկայացվեց համախմբված տեսքով, և մենք պետբյուջեում կարողացանք արտացոլել ոչ միայն այն եկամուտները և ծախսերը, որոնք անմիջապես իրականացվում էին ներքին տնտեսական հոսքերի

ձևով, այլ նաև այն ֆինանսավորումը, որը մենք ստանում էինք արտաքին ֆինանսական կազմակերպություններից, ի դեմս և՛ Համաշխարհային բանկի, և՛ Եվրոպական բանկի, և այլ ներդրողների: Առաջին անգամ ներկայացվեց բյուջե, որտեղ ֆինանսավորումը չէր ենթադրում էմիսիոն աղբյուրներ և անմիջապես դեֆիցիտի ֆինանսավորումը չէր կապվում Կենտրոնական բանկի կողմից իրականացվող էմիսիայի հետ: Ընդհակառակը, կառավարությունը որդեգրեց մի քաղաքականություն, որով արտաքին աղբյուրներից բացի, միայն սեփական պարտատոմսերի միջոցով փորձ է արվում ծածկել բյուջեի այն դեֆիցիտը, որը կար 1998թ. հաշվարկներում: Դեֆիցիտը նույնպես մեր ներկայացմամբ նվազեց. նախորդ տարվա 6,7% փոխարեն 1998թ. ամրագրեցինք 5,5% բյուջեի դեֆիցիտ:

1998 թվականի բյուջեում հիմնական գերակայությունը տրված էր կապիտալ ներդրումների իրականացմանը: Այստեղ մենք ունեցանք իսկապես ներդրումների աննախադեպ աճ. անցած ամիսների համար մենք գոհ ենք բյուջեի կատարումից, և եթե ձևավորված այս նույն միտումները շարունակվեն, ապա իսկապես կիրականացնենք կապիտալ ներդրումների այն ներկայացված լայնածավալ աշխատանքները, որոնք կան բյուջեի մասին օրենքում և ամրագրված են կոնկրետ օբյեկտների տեսքով:

Բացի դրանից, լրջագույն փոփոխություն տեղի ունեցավ նաև սոցիալական ոլորտի ֆինանսավորման մեջ. առողջապահության և կրթության ոլորտների հատկացումները մեկուկեսական տոկոսով ավելացան ընթացիկ ծախսերում, որը նույնպես կարևորագույն քայլ էր:

Բացի բյուջետային հիմնական սկզբունքներից, ունենք նաև մի յուրահատկություն, որը պայմանավորված էր 1997թ. հայտարարված և արդեն իրականացվող միջազգային սեփականաշնորհման մուտքերից ստացվող եկամուտների հետագա օգտագործմամբ: Մենք այստեղ ևս ունեցանք լուրջ քննարկումներ, վերլուծություններ և եկանք այն եզրակացության, որ ցանկացած պարագայում այն գումարները, որոնք ստացվում են պետական բյուջեում որպես սեփականաշնորհումից մուտքեր, պետք է միանշանակորեն օգտագործվեն ոչ թե ընթացիկ ծախսերի կատարման համար, այլ պետք է գնան դեպի զարգացում, դեպի կապիտալ ներ-

դրումներ: Պետական բյուջեում ամրագրվեց ՀՆԱ-ի 1,5% չափով դեֆիցիտի ավելացման հնարավորություն՝ կապված նշված կապիտալ ներդրումների իրականացման հետ:

Հարկային քաղաքականության մեջ ամրագրվեցին լուրջ սկզբունքներ, ըստ էության նորացվեց ողջ հարկային դաշտը. ընդունվեցին ավելացված արժեքի հարկին, շահութահարկին, եկամտահարկին առնչվող նոր օրենքներ: Դրանց հիմնական սկզբունքները կայանում են հարկային բեռի հավասարաչափ բաշխման, տնտեսավարող սուբյեկտների միջև մրցակցային հավասար պայմանների արատավորման, հարկային իրավունքի և պարտավորությունների գիտակցության և հարկային կարգապահության բարելավման մեջ: Ե՛վ եկամտահարկի, և՛ շահութահարկի գծով գիտակցաբար գնացինք համապատասխան նվազեցումների: Պետա-

**Առողջապահության և կրթության ոլորտների հատկացումները մեկուկեսական տոկոսով ավելացան:**

կան բյուջեն այդ երկու օրենքներից կորցրեց 6-7 միլիոն դրամ հաշվարկային եկամուտ, սակայն, մեր կարծիքով դա արդարացված է, քանզի կառավարության դիրքորոշումը կայանում էր մասնավոր ձեռներեցության զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծման մեջ: Վերջինն առավելագույնս հնարավոր էր իրականացնել ուղղակի հարկերի ճնշման չափի նվազման մեծ քաղաքականության կիրառմամբ:

Ինչ վերաբերում է անուղղակի՝ ակցիզային, ավելացրած արժեքի հարկերին, ապա, իրոք, բյուջեի եկամուտների հիմնական մասն այսօր կազմում են նշված հարկերը: Կապված հարկային վարչարարության հետագա զարգացման հետ, մենք ամրագրեցինք հիմնական ապրանքների գծով մաքսային մարմինների կողմից հարկերի և մաքսատուրքերի գանձելու հնարավորությունը, որը նույնպես բյուջեի եկամտային քաղաքականության տեսակետից ապահովեց եկամուտների արդյունավետ կառավարում:

Նոր բյուջեի առանձնահատկություններից հաջորդը տնտեսության մեջ ցածր տոկոսադրույքների նպատակադրումն է: Այստեղ և ընդհանրապես զարգացման նոր գերակայությունների մեջ շատ է կարևորվում Կենտրոնական բանկի դերը որպես ոչ միայն դրամավարկային քաղաքականության իրականացնող և պատասխանատու, այլ նաև որպես տոկոսադրույքի քաղաքականություն իրականացնող լրջագույն

օղակ պետության մեջ: Կարծում են, որ այս տարի մենք կկարողանանք ստեղծել այդ քաղաքականության նախադրյալները:

Երբեմն նախորդ կառավարություններին մեղադրում են նրանում, որ արտաքին պարտքի բեռը լուրջ ծավալով աճ է ունեցել: Ես չեմ կարող կիսել այդ մտահոգությունը, որովհետև նույնպես համարում եմ, որ դա միակ ճանապարհն էր այն լրջագույն կառուցվածքային բարեփոխումների ընթացքում, որը որդեգրվել էր կառավարության և հասարակության կողմից: Առանց նման արտոնյալ վարկերի, առանց այն ծրագրերի, որոնք իրականացվել էին համապատասխան միջազգային ինստիտուտների հետ միասին, գրեթե անհնար կլինեք կայունացման փուլից անցնել զարգացման փուլի: Այլ խնդիր է ստանձնած պարտքային պարտավորությունների օգտագործման արդյունավետության խիստ անբավարար մակարդակը, որին մենք ակնհայտ եմք եղել, ինչպես նաև պարտքի հաշվառման անփույթ վիճակը: Ուրախությամբ պետք է նշեմ, որ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը հաջողվեց ստեղծել արտաքին պարտքի կառավարման լրջագույն հիմքեր, և այսօր կառավարությունը տիրապետում է իր պարտավորությունների մինչև վերջին ցենթը և իրականացնում պարտքի համապատասխան մոնիտորինգ ընդհուպ մինչև օրական կտրվածքով: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ հարաբերություններում կառավարությունը որդեգրել է անցում պետական երաշխիքների ինստիտուտից դեպի մասնավոր հատվածի զարգացում, մասնավոր ծրագրերի իրականացում: Արտաքին պարտքի սպասարկման հիմնական ծանրությունը կընկնի 2001-2005թթ., երբ կսպասարկվի հիմնական ծավալը:

**Պետք է ամրապնդվի բարոյահոգեբանական մթնոլորտ կառավարություն-մասնավոր ձեռներեց հարաբերություններում:**

Եթե ձևավորված այն միտումները, որոնք այսօր կան տնտեսությունում, շարունակվեն, հետևողականորեն հետապնդվեն տնտեսական նոր ռազմավարության մոտեցումները, ապա կարծում եմ, որ կկարողանանք իրատեսորեն իրագործել պետական պարտքի ներկայացված ծրագիրը: Նշված գերակայությունների ամրագրման գործում մենք այսօր շատ ենք կարևորում նաև ստեղծված այն բարոյահոգեբանական մթնոլորտը, որը պետք է ամրապնդվի կառավարություն-մասնավոր ձեռներեց հարաբերություններում: Մասնավորապես, կառավարության կողմից վերջերս ընդունված մի շարք որոշումներում կան օրենքների նախագծերում փորձեցինք ամրագրել այդ հարաբերությունները: Եվ այն դեպքերում, երբ կառավարությունը իր չվճարումների կամ բյուջետային պարտքերի արդյունքում պատճառ էր դարձել ձեռնարկությունների հարկային պարտավորությունների չկատարման,

ապա այդ դեպքերը համապատասխան օրենքի նախագծով արդեն իսկ դիտարկվում են որպես հարկային արտոնություն կամ զիջվում են: Այն գումարները, որոնք այսօր պարտք են հանդիսանում, հետաձգվում են մինչև բյուջեի կողմից համապատասխան պարտավորության կատարումը: Բացի այդ, մի շարք այլ որոշումներ կոչված են ստեղծելու գործարարական և փոխշահավետ հարաբերությունների մի այնպիսի մթնոլորտ, որ կարծում եմք, թե այն ներդրումային ծրագրերը, որոնք և՛ բյուջեում են ամրագրված, և՛ սեփականաշնորհման ծրագրերում, կկարողանանք իրականացնել: Եվ տնտեսական ռազմավարության այս մոդելը՝ շրջադարձը կայունությունից դեպի տնտեսական աճ, հնարավոր կլինի իրականացնել:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

*-Դուք հայտարարել եք, որ այս տարվա ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը կնվազի և տարեվերջին կկազմի 20-25%: Որքանով եք բնական համարում տոկոսադրույքի նման կտրուկ նվազումը, այն դեպքում, երբ վերջին տարիներին այն կայուն էր և 60% սահմաններում էր, իսկ ներկայումս՝ 54% է:*

-Տոկոսադրույքի քաղաքականությունը դառնալու է շատ լուրջ գործոն մեր ընդհանուր ռազմավարության իրականացման մեջ: Նշեմ, որ այդ նվազման առաջին քայլերն արդեն իսկ կատարված են: Այն արժեթղթերը, որոնք կոչված են ծածկելու համար ԿԲ-ի նկատմամբ կառավարության պարտավորությունը, արդեն թողարկված են 20-25% տոկոսադրույքով: Այս քաղաքականությանը կարող է խանգարել միայն մեկ հանգամանք՝ կապված սղաճի միտումների հետ:

*- Դինգ տոկոս և ավել տնտեսական աճ ունեցող երկրներում ներդրումները կազմել են համախառն ներքին արդյունքի շուրջ 25%: Հայաստանում այն կազմում է մոտ 10%: Ե՞րբ ներդրումները կմոտենան այդ սահմանին:*


-- Կարծում եմ, որ արդեն ունենք լուրջ նախադրյալներ ներդրումների ՀՆԱ ցուցանիշը բարձրացնելու, քանի որ արդեն իսկ ձևավորված այն համաչափությունները, որոնք ստեղծվել են, թույլ են տալիս մեզ խոսել ներդրումների ծավալների մեծացման մասին: 1998թ. համար արդեն կոնկրետ ծրագրերով խոսքը զնում է մոտ 200 միլիոն դոլարի ներդրումների մասին: Դրանք, սակայն այն ներդրումներն են, որոնք այս կամ այն կերպ կապված են սեփականաշնորհման գործընթացի հետ: Կարծում եմ, որ եթե այս քաղաքականությունը մենք կարողանանք շարունակել, ապա 2000 թվականից կարող ենք խոսել արդեն այդ ցուցանիշի զգալի մակարդակի մասին:

*- Տնտեսական աճին խանգարող գործոն է կաշառակերությունը: Պետական կառավարման ապարատում աշխատավարձը կազմում է շուրջ 8300 դրամ: Ո՞րն է լուծումը:*

- Կարևոր հարց է և կապված է մեր ընդհանուր սոցիալական զարգացման այն մոդելի հետ, որը մենք պարտավոր ենք ուղղակի իրականացնել: Հատկապես տնտեսական քաղաքականության տեսանկյունից այսօր առաջնային դեր պետք է տրվի կառավարչական

ապարատի բարեփոխումներին: Վերլուծությունները ցույց են տալիս, որ կառավարման ապարատի այսօրվա ծավալում մեքենայի ներքո թաքցված է առնվազն տասնյակից ավել տոկոս լրացուցիչ տնտեսական աճ, ինչն առանց հավելյալ միջոցների կարող է գրանցվել այս ոլորտի նպատակային բարեփոխման հետևանքով: Այդ առումով, ընդունելով «Ռազմավարական պլանավորումից դեպի ռազմավարական մտածելակերպ» կարգախոսի արդիականությունը՝ անհրաժեշտ է կարճ ժամանակահատվածում հասնել պետական կառավարման համակարգի որակական լուրջ փոփոխությունների:

Բյուջետային աշխատակիցների ընդհանուր թվաքանակը մեր հանրապետությունում կազմում է մոտ 280 հազար մարդ, ինչը սարսափելի մեծ թիվ է: Առաջին նպատակն է այստեղ ոչ թե աշխատավարձերի բարձրացումն է, այլ կառավարման ապարատի օպտիմիզացումը: Կարծում եմ, որ այն ծրագրերը, որ ունենք, կբերեն մի իրավիճակի, երբ արդեն 1998թ. վերջին կունենաք ոչ թե 280 հազար, այլ մոտ 240 հազար աշխատակից: Հետագա բարեփոխումների ընթացքում կհասնենք նրան, որ այս մարդիկ չեն կոչվի բյուջետային աշխատակից, այլ հնարավորություն կունենան մասկաթվերի տեսքով աշխատել: Կառավարման ապարատի բարեփոխումների արդյունքում նախատեսվում է արդեն 1999թ. շեշտակի ավելացնել հատկացումները բյուջետային աշխատակիցներին:



*Նախորդ դասախոսությունները պահվում են Ինտեռնետ ցանցում հետևյալ հասցեով.*

[www.aua.am/aua/extens](http://www.aua.am/aua/extens)

**Մեր հաջորդ դասախոսության մասին տեղեկություններ կգտնեք «Հայաստանի հանրապետություն» և «Ազգ» օրաթերթերում**

Հայաստանի ամերիկյան համալսարան

Հասցեն՝ Երևան, Բաղրամյան 40  
Ֆեռ. 27-16-58



**ԲԱՆԱԽՈՍ**

«Դասախոսությունների շարք»  
ծրագրի տեղեկագիր

Հայաստանի ամերիկյան համալսարան  
**Հատուկ դասընթացների բաժին**

URL: [//www.aua.am/aua/extens](http://www.aua.am/aua/extens)

Ծրագրի համակարգող՝  
**Չրայր Զորյան**

Հայաստանի ամերիկյան համալսարան  
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40  
հեռ. 27-16-58

Հասցեատեր